



EUROPEAN COMMISSION

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 20 դեկտեմբերի 2013թ.

Նոր ֆինանսավորում Հայաստանի տնտեսական զարգացման, քաղաքացիական հասարակության ու պետական մարմինների աջակցությանը:

Եվրոպական միությունը ընդունել է 41 մլն եվրո արժողության փաստաթղթերի փաթեթ Հայաստանի քաղաքացիական հասարակությանը, տարածաշրջանային զարգացմանը և գյուղատնտեսությանը աջակցելու նպատակով: Այս օժանդակությունը տրամադրվում է Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում:

«ԵՄ-ն ու Հայաստանը հանձնառու են շարունակել ընդհանուր արժեքների վրա հիմնված համագործակցությունը՝ փոխադարձ հետքերություն ներկայացնող բոլոր ուղղություններով: Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման, տարածաշրջանային համաչափ զարգացման, ավելի արդյունավետ քաղաքացիական ծառայության և հզոր քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված մեր օժանդակությունը կապահովի զգալի առաջընթաց Հայաստանում իրականացվող բարեփոխումների գործընթացին իսկ հասարակությունը կստանա շոշափելի արդյունքներ», ասաց Ընդլայնման և Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:

Գյուղատնտեսության ու գյուղական համայնքների զարգացմանն ուղղված ԵՄ նոր նախաձեռնությունների նպատակն է բարելավել գյուղատնտեսական կառույցների գործունեության, նպաստել ֆերմերների ասոցիացիաների զարգացմանը և ապահովել Հայաստանում քաղաքացիներին ավելի մատչելի միջոցների տրամադրմանը: Օժանդակությունը միտված է Հայաստանի գյուղական համայնքների պայմանների բարելավմանը:

Տարածաշրջանային զարգացման ոլորտում ծրագիրը կաջակցի առանձին ծրագրերին (օրինակ՝ հանրային-մասնավոր համագործակցություն, աշխատատեղերի ստեղծում, անձնակազմի վերապատրաստում) նպաստելով Հայաստանի համայնքների տնտեսական զարգացմանը:

Օժանդակության նպատակն է նաև հզորացնել քաղաքացիական հասարակության դերը, որպես երկկողմ համագործակցությունը խթանելու և բարեփոխումների մոնիտորինգն ապահովելու ԵՄ-ն կարևոր գործընկերոջ: Այն միտված է նաև բարձրացնել քաղաքացիների կարողությունները գերակա ուղղություններով՝ ներառյալ ԵՄ մուտքի արտոնագրերի և Ռեադմիսիայի համաձայնագրերը, ինչպես նաև խթանել Հայաստանի մասնակցությունը ԵՄ ծրագրերում և Հայաստանի համագործակցությունը ԵՄ գործակալությունների հետ:

Contacts :

[Anca Paduraru](#) (+32 2 296 64 30)

[Peter Stano](#) (+32 2 295 74 84)

Ընդհանուր տեղեկություններ

Ծրագիրը Արևելյան գործընկերություն նախաձեռնության մաս է, որն ընդգրկում է Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան հատվածը և նապատակ ունի Հայաստանը, Ադրբեյջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան ավելի մոտեցնել Եվրոպական միությանը:

Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Եվրոպական հանանության և գործընկերության գործիքի կողմից: Այն բաղկացած է 3 մասից.

- Օժանդակություն գյուղատնտեսությանն ու գյուղական համայնքների զարգացմանը, որը կնպաստի Հայաստանում արդյունավետ և կայուն գյուղատնտեսության ու գյուղական համայնքների զարգացմանը, համաձայն Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման Եվրոպական միության ծրագրին (25 մլն եվրո);
- Աջակցություն Հայաստանի տարածաշրջանային զարգացմանը ապահովելով առաջընթաց դեպի Հայաստանի համայնքների միջև համաչափ սոցիալական և տնտեսական զարգացում (10 մլն եվրո);
- Աջակցություն ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանը, որի նպատակն է աջակցել հիմնական պետական մարմիններին իրականացնել մուտքի արտոնագրերի դյուրացման և Ռեադմիսիայի համաձայնագրերը և ԵԶ գործողությունների ծրագիրը, հզորացնել Հայաստանի քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում իրականացվող բարեփոխումների գործընթացի վերահսկման նպատակով, և հզորացնել քաղաքացիների կարողությունները ինչպես նաև նպաստել Հայաստանի մասնակցությանը ԵՄ ծրագրերում և Հայաստանի համագործակցությանը ԵՄ գործակալությունների հետ (6 մլն եվրո):

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

Հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի կայքէջ՝

http://ec.europa.eu/commission_2010-2014/fule/index_en.htm

Արևելյան գործընկերություն՝

<http://ec.europa.eu/europeaid/easternpartnership>

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն՝

http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm